Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղերձը Թատրոնի միջազգային օրվա առթիվ

27.03.2026

Սիրելի՛ թատերական գործիչներ, արվեստասեր հասարակություն, Սրտանց շնորհավորում եմ ձեզ Թատրոնի միջազգային օրվա առթիվ: Թատրոնը եղել և մնում է մեր ազգային մշակույթի կարևորագույն հենասյուներից մեկը՝ հանդիսանալով մարդկային հոգու խորքերին հասնելու, արժեհամակարգ ձևավորելու և հասարակությանը միավորելու հզոր միջոց: Այն մի վայր է, որտեղ խոսքն ու զգացմունքը դառնում են կենդանի, իսկ բեմը՝ կյանքի արտացոլումը: Գեղարքունիքի մարզում թատերական արվեստը իր առանձնահատուկ տեղն ունի՝ իր նվիրյալ գործիչներով, ստեղծագործական ջանքերով և հանդիսատեսի անկեղծ սիրով: Ձեր նվիրումն ու աշխատանքը արժանի են խորին գնահատանքի: Թող ձեր ստեղծագործական ուղին լինի լուսավոր ու հաջողություններով լի, դահլիճները՝ միշտ լեցուն, իսկ հանդիսատեսի ծափահարությունները՝ անսպառ: Մաղթում եմ ձեզ առողջություն, նոր ստեղծագործական վերելքներ և անսպառ ներշնչանք: